## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
## ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԱՊՁԲ-9/9-3»

ք. Երևան «30» «հունիսի» 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրին համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը, տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 77,462,190 (յոթանասունյոթ միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար հարյուր իննսուն) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10 ը:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթ (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14 րդ հոդվածի 7 րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի [illegible]

նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքներին առնչվող կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144129
ՀՎՀՀ 00867[illegible]
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ
Ք. Երևան, [illegible] 32-10
«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 21700282558001
ՀՎՀՀ 01210095
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԾՀԱՊՁԲ-9/9-3 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Տեխնիկական հատկանիշներ |
|---|---|---|
| Cobas h232 ռեագենտներ: Լաբորատոր ազդանյութեր, արյան որոշման ազդանյութեր այդ թվում՝ | | |
| 1 | D-Դիմեր 10 test Roche Cardiac | Նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝10 տեստ, 2-8 աստիճան ջերմություն |
| 2 | Տրոպոնին T 10 test Roche Cardiac | Roche CARDIAC POC Troponin T, Նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝10 տեստ, 2-8 աստիճան ջերմություն |
| 3 | Ստուգիչ Control Troponin-T | Նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝ 2x1 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 4 | Ստուգիչ Control D-Dimer | Նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝2x1 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 5 | Roche Cardiac IQC 1 x low / 1 x high | Նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝1 x ցածր / 1 x բարձր, 15-25 աստիճան ջերմություն |
| 6 | Roche Cardiac Pipettes - sample application 150 mic | Նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝20 հատ |
| *Ursys 1100 և Urielux անալիզատորների ռեագենտները* | | |
| 7 | Ռեագենտ UF II Pack Bac 2x2.1L | 2x2.1 լ , 15-25 աստիճան ջերմություն |
| 8 | Ռեագենտ UF II Pack Sed 2X2.1L | 2 x 2.1լ, 15-25 աստիճան ջերմություն |
| 9 | Ռեագենտ UF II Search-Sed 29mlX2 | 2 x 29 մլ, 15-25 աստիճան ջերմություն |
| 10 | Ռեագենտ UF II Search-Bac 25mlX2 | 2 x 25 մլ, 15-25 աստիճան ջերմություն |
| 11 | Ռեագենտ UF II Sheath 20L | 20լ, 15-25 աստիճան ջերմություն |
| 12 | Ստուգիչ UF II երկու մակարդակի 47mlX1 H, 47mlX1 L | 47մլ x 1 H, 47մլ x 1 L, 2-8 աստիճան ջերմություն |
| 13 | Կալիբրատոր UF II47mlX2ml | 2x 47մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 14 | Combur- 10 Թեսթ/կոմբուր/ UX N100 | տուփ N100, 15-25 աստիճան ջերմություն |
| 15 | Կոնտրոլ սթրիպ Ursys և Urielux-ի համար N50 | տուփ N50, 15-25 աստիճան ջերմություն |
| 16 | Թուղթ տպիչի Urisys և Urelux-ի համար N5 | Urisys և Urielux-ի համար N5 |
| 17 | Խնամքի հավաք UF500i-ի մեկ տարվա համար | UF 500i -ի համար |
| *CA-50, CA-530 և Start 4անալիզատորների ռեագենտները* | | |
| 18 | Թրոմբոգլոտին 10 x 10 ml | 10 x 10 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 19 | Թրոմբին 10 x 5 ml | 10 x 5 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 20 | ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml | 10 x 10 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 21 | Կալցի քլորի լուծույթ CaCl2 24x15ml | 24 x 15 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 22 | Իննովին 10 x 10 ml | 10 x 10 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 23 | Օրեն Կոլեր բուֆեր 24x15 ml | 24 x 15 մլ, 15-25 աստիճան ջերմություն |
| 24 | PTմույտի կալիբրատոր 6 x 1 ml | 6 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 25 | Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml | CiTrol1-E 10 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 26 | Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml | CiTrol2-E 10 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմություն |

| | | |
|---|---|---|
| 27 | Ռեակցիոն Տուբ 3000 | 3000 հատ |
| 28 | Լվացող հեղուկ CAClean I 1x50ml | 1 x 50 մլ, 2-8 աստիճան ջերմություն |
| 29 | Տպիչի թուղթ TP-1 50 roll | TP-1 50 ռոլոն, նախատեսված Urisys-ի և Urielux-ի համար, |
| 30 | Start 4 FIBRI-PREST a (Stago) 12x2 ml | Start 4 անալիզատորի համար նախատեսված ֆիբրինոգենի որոշման տեստ հավաքածու: Ծավալը՝ 12x2 մլ: Բավականեցնում է մոտ 480 թեստի Start4 սարքով աշխատելու դեպքում համաձայն S.O.P.-ի (standardized operating procedures ) : Մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոզիմետրիկ չափման տեխնոլոգիայի: Արտադրությունը Stago: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: |
| 31 | Start 4 STA Thrombin, (Stago) 12x2ml, | Թրոմբին ժամանակ, (Stago), ծավալը՝ 12x2ml , Բավականեցնում է մոտ 240 թեստի Start4 սարքով աշխատելու դեպքում համաձայն S.O.P.-ի (standardized operating procedures ) : Մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոզիմետրիկ չափման տեխնոլոգիայի, Արտադրությունը Stago: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: |
| 32 | Start 4 PTT a (Stago) 12x5ml, | Start 4 անալիզատորի համար նախատեսված ՊՏՏԱ ժամանակի որոշման տեստ հավաքածու: Ծավալը՝ 12x5 մլ, Բավականեցնում է մոտ 1200 թեստի Start4 սարքով աշխատելու դեպքում համաձայն S.O.P.-ի (standardized operating procedures ) : Մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոզիմետրիկ չափման տեխնոլոգիայի, Արտադրությունը Stago: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: |
| 33 | Start 4 Neoplastin Cl plus, (Stago) 6x 5 ml, | Նեոպլաստին Cl պլյուս , 6x5 մլ թեստ-հավաքածու: Բավականեցնում է մոտ 300 թեստի Start4 սարքով աշխատելու դեպքում համաձայն S.O.P.-ի (standardized operating procedures ) : Մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոզիմետրիկ չափման տեխնոլոգիայի, Neoplastine Cl Plus թեստը զգայուն չէ մինչև 1 IU/ml ոչ ֆրակցիոն հեպարինի և մինչև 1.5 IU/ml anti-Xa ցածր մոլեկուլային կշիռ ունեցող հեպարինի նկատմամբ: Ֆիրմայի նշանի առկայությունը: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճանում: |
| 34 | Start 4 Unicalibrator (Stago) 6x1ml | 6x1ml, 2-8 աստիճան ջերմություն |
| 35 | Start 4 Coag Control N+P (Stago) 12X2X1 ml | 12X2X1 ml, 2-8 աստիճան ջերմություն |
| 36 | Start 4 150 strips of 4 disposable cuvettes (Stago) 150 X 4 | 150 X 4 ստրիպ |
| 37 | Start 4 balls vial of (Stago) 1850 | 1850 հատիկ |
| 38 | Start 4 FINNTIP 1.25ML (X100) | 1.25ML (X100) |
| 39 | Start 4 FINNTIP 2. 5ML (X100) | 2.5ML (X100) |
| 40 | Տպիչի թուղթ Start 4 –ի համար հատ | Նախատեսված է Start4 անալիզատորի համար, հատ, 15-25 աստիճան ջերմություն |
| | *Cobas 6000-ի իմունոլոգիական հավաքներ և Elecsys 2010 անալիզատորի ռեագենտներ* | |
| 41 | Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 42 | ԱԿՏԳ 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 43 | Պրոլակտին 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 44 | Պրոգեստերոն 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 45 | Լյուտեինիզացնող հորմոն 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 46 | Ֆոլիկուլոստիմուլյացնող հորմոն 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 47 | Ռեակտիվ DHEA-S 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 48 | Տեստոստերոն 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 49 | Էստրադիոլ 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 50 | Կորտիզոլ 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 51 | Տրիյոդթիրոնին T3 200 թեսթ | 200 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 52 | Տրիյոդթիրոնին FT3 200 թեսթ | 200 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |

| | | |
|---|---|---|
| 53 | Թիրոքսին T4 200թեսթ | 200 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 54 | Թիրոքսին FT4 ազատ 200 թեսթ | 200 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 55 | Թիրեոտրոպ հորմոն TSH 200 թեսթ | 200 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 56 | Anti-Թիրեոգլոբուլին 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 57 | Anti-TPO ռեակտիվ 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 58 | C-Պեպտիդ 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 59 | Ինսուլին 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 60 | Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 61 | Բետա խորիոն գոնադոտրոպին | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 62 | Ալֆա ֆետոպրոտեին 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 63 | Հերպեսվիրուս 1 HSV 1 IgG 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 64 | Հերպեսվիրուս 2 HSV 2 IgG 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 65 | Պարա թիրոիդ հորմոն PTH 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 66 | Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 67 | CA 125 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 68 | CA 15-3 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 69 | CA 19-9 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 70 | CA 72-4 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 71 | Ֆերիտին 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 72 | Վիտամին B12 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 73 | Anti-CCP Անտի ցիկլիկ ցիտրուլինային պեպտիդ 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 74 | ՄԻԱՀ-ի ռեակտիվ HIV COMBI PT 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 75 | Հեպատիտ C Anti-HCV | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 76 | Հեպատիտ B HBsAg 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 77 | Հեպատիտ B HBeAg 100 թեսթ | 100 թեսթ,2-8 աստիճան ջերմություն |
| 78 | Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 79 | ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 80 | Տոքսոպլազմա IgM 100թեստ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 81 | Տոքսոպլազմա IgG 100թեստ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 82 | Ցիտոմեգալովիրուս IgM 100թեստ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |
| 83 | Ցիտոմեգալովիրուս IgG 100թեստ | 100 թեսթ, 2-8 աստիճան ջերմություն |

Ծանոթություն՝ Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, ՀՀ ՊՆ 73014 զորամաս հասցեով: Մատակարարման ժամանակ մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճենը և մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի և/կամ/ ապրանքի որակի սերտիֆիկատ (Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր): Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-9/9-3 պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Մեկ միավ. գին/դրամ/ | Ընդհանուր գումար/դրամ/ | Գնման ժամանակացույց | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2017թ. III եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 30.07.2017թ | 2017թ. IV եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 30.11.2017թ |
| 1 | D-Դիմեր 10 test Roche Cardiac | տուփ | 13 | 57,000 | 741,000 | 7 | 6 |
| 2 | Տրոպոնին T 10 test Roche Cardiac | տուփ | 28 | 58,000 | 1,624,000 | 14 | 14 |
| 3 | Ստուգիչ Control Troponin-T | տուփ | 6 | 33,000 | 198,000 | 3 | 3 |
| 4 | Ստուգիչ Control D-Dimer | տուփ | 6 | 39,000 | 234,000 | 3 | 3 |
| 5 | Roche Cardiac IQC 1 x low / 1 x high | տուփ | 5 | 34,000 | 170,000 | 3 | 2 |
| 6 | Roche Cardiac Pipettes - sample application 150 mic | հավաքածու | 31 | 7,650 | 237,150 | 16 | 15 |
| 7 | Ռեագենտ UF II Pack Bac 2x2.1L | հավաքածու | 8 | 127,500 | 1,020,000 | 4 | 4 |
| 8 | Ռեագենտ UF II Pack Sed 2X2.1L | հավաքածու | 8 | 131,300 | 1,050,400 | 4 | 4 |
| 9 | Ռեագենտ UF II Search-Sed 29mlX2 | հավաքածու | 6 | 170,000 | 1,020,000 | 3 | 3 |
| 10 | Ռեագենտ UF II Search-Bac 25mlX2 | հավաքածու | 5 | 191,250 | 956,250 | 3 | 2 |
| 11 | Ռեագենտ UF II Sheath 20L | հավաքածու | 8 | 102,000 | 816,000 | 4 | 4 |
| 12 | Ստուգիչ UF II երկու մակարդակի 47mlX1 H, 47mlX1 L | հավաքածու | 1 | 229,500 | 229,500 | 1 | |
| 13 | Կալիբրատոր UF II47mlX2ml | հավաքածու | 1 | 416,500 | 416,500 | 1 | |
| 14 | Combur- 10 Թեստ/կոմբուր/ UX N100 | հավաքածու | 400 | 20,000 | 8,000,000 | 200 | 200 |
| 15 | Կոնտրոլ սթրիպ Ursys և Urielux-ի համար N50 | հավաքածու | 20 | 20,000 | 400,000 | 10 | 10 |
| 16 | Թուղթ տպիչի Urisys և Urelux-ի համար N5 | հավաքածու | 65 | 3,300 | 214,500 | 33 | 32 |
| 17 | Խնամքի հավաք UF500i-ի մեկ տարվա համար | հավաքածու | 2 | 368,000 | 736,000 | 1 | 1 |
| 18 | Թրոմբոգլոտին 10 x 10 ml | հավաքածու | 2 | 76,500 | 153,000 | 1 | 1 |
| 19 | Թրոմբին 10 x 5 ml | հավաքածու | 20 | 73,800 | 1,476,000 | 10 | 10 |
| 20 | ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml | հավաքածու | 12 | 131,400 | 1,576,800 | 6 | 6 |
| 21 | Կալցի քլորի լուծույթ CaCl2 24x 15ml | հավաքածու | 16 | 37,000 | 592,000 | 8 | 8 |
| 22 | Իննովին 10 x 10 ml | հավաքածու | 18 | 57,600 | 1,036,800 | 9 | 9 |
| 23 | Օուեն Կոլեր բուֆեր 24x15 ml | հավաքածու | 22 | 42,000 | 924,000 | 11 | 11 |
| 24 | PTմուլտի կալիբրատոր 6 x 1 ml | հավաքածու | 3 | 118,400 | 355,200 | 2 | 1 |
| 25 | Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml | հավաքածու | 38 | 27,900 | 1,060,200 | 19 | 19 |
| 26 | Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml | հավաքածու | 5 | 27,900 | 139,500 | 3 | 2 |
| 27 | Ռեակցիոն Տուբ 3000 | հավաքածու | 5 | 114,120 | 570,600 | 3 | 2 |
| 28 | Լվացող հեղուկ CAClean I 1x50ml | հավաքածու | 80 | 20,700 | 1,656,000 | 40 | 40 |
| 29 | Տպիչի թուղթ TP-1 50 roll | տուփ | 3 | 33,000 | 99,000 | 2 | 1 |
| 30 | Start 4 FIBRI-PREST a (Stago) 12x2 ml | հավաքածու | 43 | 130,000 | 5,590,000 | 22 | 21 |
| 31 | Start 4 STA Thrombin, (Stago) 12x2ml, | հավաքածու | 15 | 36,000 | 540,000 | 8 | 7 |
| 32 | Start 4 PTT a (Stago) 12x5ml, | հավաքածու | 40 | 120,000 | 4,800,000 | 20 | 20 |
| 33 | Start 4 Neoplastin CI plus, (Stago) 6x 5 ml, | հավաքածու | 80 | 25,000 | 2,000,000 | 40 | 40 |
| 34 | Start 4 Unicalibrator (Stago) 6x1ml | հավաքածու | 10 | 52,300 | 523,000 | 5 | 5 |
| 35 | Start 4 Coag Control N+P (Stago) 12X2X1 ml | հավաքածու | 10 | 101,500 | 1,015,000 | 5 | 5 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | Start 4 150 strips of 4 disposable cuvettes (Stago) 150 X 4 | հավաքածու | 90 | 62,500 | 5,625,000 | 45 | 45 |
| 37 | Start 4 balls vial of (Stago) 1850 | հավաքածու | 40 | 65,000 | 2,600,000 | 20 | 20 |
| 38 | Start 4 FINNTIP 1.25ML (X100) | հավաքածու | 20 | 204,000 | 4,080,000 | 10 | 10 |
| 39 | Start 4 FINNTIP 2. 5ML (X100) | հավաքածու | 10 | 206,000 | 2,060,000 | 5 | 5 |
| 40 | Սպիչի թուղթ Start 4 –ի համար հատ | տուփ | 75 | 1,100 | 82,500 | 38 | 37 |
| 41 | Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեստ | հավաքածու | 1 | 100,700 | 100,700 | 1 | |
| 42 | ԱԿՏԳ 100 թեստ | հավաքածու | 2 | 164,300 | 328,600 | 1 | 1 |
| 43 | Պրոլակտին 100 թեստ | հավաքածու | 7 | 61,300 | 429,100 | 4 | 3 |
| 44 | Պրոգեստերոն 100 թեստ | հավաքածու | 2 | 61,300 | 122,600 | 1 | 1 |
| 45 | Լյուտեինիզացնող հորմոն 100 թեստ | հավաքածու | 4 | 48,400 | 193,600 | 2 | 2 |
| 46 | Ֆոլիկուլոստիմուլյացնող հորմոն 100 թեստ | հավաքածու | 4 | 48,400 | 193,600 | 2 | 2 |
| 47 | Ռեակտիվ DHEA-S 100 թեստ | հավաքածու | 3 | 73,100 | 219,300 | 2 | 1 |
| 48 | Տեստոստերոն 100 թեստ | հավաքածու | 3 | 68,400 | 205,200 | 2 | 1 |
| 49 | Էստրադիոլ 100 թեստ | հավաքածու | 3 | 57,000 | 171,000 | 2 | 1 |
| 50 | Կորտիզոլ 100 թեստ | հավաքածու | 5 | 73,100 | 365,500 | 3 | 2 |
| 51 | Տրիյոդթիրոնին T3 200 թեստ | հավաքածու | 4 | 52,200 | 208,800 | 2 | 2 |
| 52 | Տրիյոդթիրոնին FT3 200 թեստ | հավաքածու | 6 | 48,400 | 290,400 | 3 | 3 |
| 53 | Թիրոքսին T4 200թեստ | հավաքածու | 4 | 52,200 | 208,800 | 2 | 2 |
| 54 | Թիրոքսին FT4 ազատ 200 թեստ | հավաքածու | 8 | 48,400 | 387,200 | 4 | 4 |
| 55 | Թիրեոտրոպ հորմոն TSH 200 թեստ | հավաքածու | 20 | 48,400 | 968,000 | 10 | 10 |
| 56 | Anti-Թիրեոգլոբուլին 100 թեստ | հավաքածու | 15 | 85,500 | 1,282,500 | 8 | 7 |
| 57 | Anti-TPO ռեակտիվ 100 թեստ | հավաքածու | 15 | 85,500 | 1,282,500 | 8 | 7 |
| 58 | C-Պեպտիդ 100 թեստ | հավաքածու | 4 | 116,800 | 467,200 | 2 | 2 |
| 59 | Ինսուլին 100 թեստ | հավաքածու | 4 | 77,900 | 311,600 | 2 | 2 |
| 60 | Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA | հավաքածու | 8 | 84,500 | 676,000 | 4 | 4 |
| 61 | Բետա խորիոն գոնադոտրոպին | հավաքածու | 3 | 64,600 | 193,800 | 2 | 1 |
| 62 | Ալֆա ֆետոպրոտեին 100 թեստ | հավաքածու | 3 | 84,500 | 253,500 | 2 | 1 |
| 63 | Հերպեսվիրուս 1 HSV 1 IgG 100 թեստ | հավաքածու | 3 | 137,200 | 411,600 | 2 | 1 |
| 64 | Հերպեսվիրուս 2 HSV 2 IgG 100 թեստ | հավաքածու | 3 | 137,200 | 411,600 | 2 | 1 |
| 65 | Պարա թիրոիդ հորմոն PTH 100 թեստ | հավաքածու | 2 | 120,600 | 241,200 | 1 | 1 |
| 66 | Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA 100 թեստ | հավաքածու | 2 | 74,100 | 148,200 | 1 | 1 |
| 67 | CA 125 100 թեստ | հավաքածու | 3 | 114,000 | 342,000 | 2 | 1 |
| 68 | CA 15-3 100 թեստ | հավաքածու | 2 | 114,000 | 228,000 | 1 | 1 |
| 69 | CA 19-9 100 թեստ | հավաքածու | 2 | 114,000 | 228,000 | 1 | 1 |
| 70 | CA 72-4 100 թեստ | հավաքածու | 1 | 81,700 | 81,700 | 1 | |
| 71 | Ֆերիտին 100 թեստ | հավաքածու | 2 | 75,900 | 151,800 | 1 | 1 |
| 72 | Վիտամին B12 100 թեստ | հավաքածու | 3 | 88,300 | 264,900 | 2 | 1 |
| 73 | Anti-CCP Անտի ցիկլիկ ցիտրուլինային պեպտիդ 100 թեստ | հավաքածու | 3 | 285,000 | 855,000 | 2 | 1 |
| 74 | ՄԻԱՀ-ի ռեակտիվ HIV COMBI PT 100 թեստ | հավաքածու | 18 | 115,470 | 2,078,460 | 9 | 9 |
| 75 | Հեպատիտ C Anti-HCV | հավաքածու | 20 | 170,050 | 3,401,000 | 10 | 10 |
| 76 | Հեպատիտ B HBsAg 100 թեստ | հավաքածու | 20 | 57,000 | 1,140,000 | 10 | 10 |
| 77 | Հեպատիտ B HBeAg 100 թեստ | հավաքածու | 1 | 118,750 | 118,750 | 1 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 78 | Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ | հավաքածու | 15 | 76,000 | 1,140,000 | 8 | 7 |
| 79 | ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ | հավաքածու | 1 | 164,700 | 164,700 | 1 | |
| 80 | Տոքսոպլազմա IgM 100թեստ | հավաքածու | 1 | 80,700 | 80,700 | 1 | |
| 81 | Տոքսոպլազմա IgG 100թեստ | հավաքածու | 2 | 80,700 | 161,400 | 1 | 1 |
| 82 | Ցիտոմեգալովիրուս IgM 100թեստ | հավաքածու | 1 | 100,000 | 100,000 | 1 | |
| 83 | Ցիտոմեգալովիրուս IgG 100թեստ | հավաքածու | 2 | 117,890 | 235,780 | 1 | 1 |
| | Ընդամենը | | | | 77,462,190 | | |

Հավելված N 3
N ԾՀԱՊՁԲ-9/9-3 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.17թ |
| 1 | D-Դիմեր 10 test Roche Cardiac | 33691159/111/4/5 | 399,000 | 399,000 | 399,000 | 741,000 | 741,000 | 741,000 |
| 2 | Տրոպոնին T 10 test Roche Cardiac | 33691159/112/4/5 | 812,000 | 812,000 | 812,000 | 1,624,000 | 1,624,000 | 1,624,000 |
| 3 | Ստուգիչ Control Troponin-T | 33691162/27/4/5 | 99,000 | 99,000 | 99,000 | 198,000 | 198,000 | 198,000 |
| 4 | Ստուգիչ Control D-Dimer | 33691162/28/4/5 | 117,000 | 117,000 | 117,000 | 234,000 | 234,000 | 234,000 |
| 5 | Roche Cardiac IQC 1 x low / 1 x high | 33691162/29/4/5 | 102,000 | 102,000 | 102,000 | 170,000 | 170,000 | 170,000 |
| 6 | Roche Cardiac Pipettes - sample application 150 mic | 33141211/42/4/4 | 122,400 | 122,400 | 122,400 | 237,150 | 237,150 | 237,150 |
| 7 | Ռեագենտ UF II Pack Bac 2x2.1L | 33691162/30/4/4 | 510,000 | 510,000 | 510,000 | 1,020,000 | 1,020,000 | 1,020,000 |
| 8 | Ռեագենտ UF II Pack Sed 2X2.1L | 33691162/31/4/4 | 525,200 | 525,200 | 525,200 | 1,050,400 | 1,050,400 | 1,050,400 |
| 9 | Ռեագենտ UF II Search-Sed 29mlX2 | 33691162/32/4/4 | 510,000 | 510,000 | 510,000 | 1,020,000 | 1,020,000 | 1,020,000 |
| 10 | Ռեագենտ UF II Search-Bac 25mlX2 | 33691162/33/4/4 | 573,750 | 573,750 | 573,750 | 956,250 | 956,250 | 956,250 |
| 11 | Ռեագենտ UF II Sheath 20L | 33691162/34/4/4 | 408,000 | 408,000 | 408,000 | 816,000 | 816,000 | 816,000 |
| 12 | Ստուգիչ UF II երկու մակարդակի 47mlX1 H, 47mlX1 L | 33691162/35/4/4 | 229,500 | 229,500 | 229,500 | 229,500 | 229,500 | 229,500 |
| 13 | Կալիբրատոր UF II47mlX2ml | 33691162/36/4/4 | 416,500 | 416,500 | 416,500 | 416,500 | 416,500 | 416,500 |
| 14 | Combur- 10 Թեսթ/կոմբուր/ UX N100 | 33691162/37/4/4 | 4,000,000 | 4,000,000 | 4,000,000 | 8,000,000 | 8,000,000 | 8,000,000 |
| 15 | Կոնտրոլ սթրիպ Ursys և Urielux-ի համար N50 | 33691162/38/4/4 | 200,000 | 200,000 | 200,000 | 400,000 | 400,000 | 400,000 |
| 16 | Թուղթ տպիչի Urisys և Urelux-ի համար N5 | 33141211/43/4/4 | 108,900 | 108,900 | 108,900 | 214,500 | 214,500 | 214,500 |
| 17 | Խնամքի հավաք UF500i-ի մեկ տարվա համար | 33141211/44/4/4 | 368,000 | 368,000 | 368,000 | 736,000 | 736,000 | 736,000 |
| 18 | Թրոմբոզլոտին 10 x 10 ml | 33691159/113/4/4 | 76,500 | 76,500 | 76,500 | 153,000 | 153,000 | 153,000 |
| 19 | Թրոմբին 10 x 5 ml | 33691159/114/4/4 | 738,000 | 738,000 | 738,000 | 1,476,000 | 1,476,000 | 1,476,000 |
| 20 | ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml | 33691159/115/4/4 | 788,400 | 788,400 | 788,400 | 1,576,800 | 1,576,800 | 1,576,800 |
| 21 | Կալցի քլորի լուծույթ CaCl2 24x 15ml | 33691159/116/4/4 | 296,000 | 296,000 | 296,000 | 592,000 | 592,000 | 592,000 |
| 22 | Իննովին 10 x 10 ml | 33691162/39/4/4 | 518,400 | 518,400 | 518,400 | 1,036,800 | 1,036,800 | 1,036,800 |
| 23 | Օուեն Կոլեր բուֆեր 24x15 ml | 33691162/40/4/4 | 462,000 | 462,000 | 462,000 | 924,000 | 924,000 | 924,000 |
| 24 | PTմուլտի կալիբրատոր 6 x 1 ml | 33691162/41/4/4 | 236,800 | 236,800 | 236,800 | 355,200 | 355,200 | 355,200 |
| 25 | Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml | 33691162/42/4/4 | 530,100 | 530,100 | 530,100 | 1,060,200 | 1,060,200 | 1,060,200 |
| 26 | Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml | 33691162/43/4/4 | 83,700 | 83,700 | 83,700 | 139,500 | 139,500 | 139,500 |
| 27 | Ռեակցիոն Snip 3000 | 33141211/45/4/4 | 342,360 | 342,360 | 342,360 | 570,600 | 570,600 | 570,600 |
| 28 | Լվացող հեղուկ CAClean I 1x50ml | 33691162/44/4/4 | 828,000 | 828,000 | 828,000 | 1,656,000 | 1,656,000 | 1,656,000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | Սպիչի թուղթ TP-1 50 roll | 33141211/46/4/5 | 66,000 | 66,000 | 66,000 | 99,000 | 99,000 | 99,000 |
| 30 | Start 4 FIBRI-PREST a (Stago) 12x2 ml | 33691159/117/4/4 | 2,860,000 | 2,860,000 | 2,860,000 | 5,590,000 | 5,590,000 | 5,590,000 |
| 31 | Start 4 STA Thrombin, (Stago) 12x2ml, | 33691159/118/4/4 | 288,000 | 288,000 | 288,000 | 540,000 | 540,000 | 540,000 |
| 32 | Start 4 PTT a (Stago) 12x5ml, | 33691159/119/4/4 | 2,400,000 | 2,400,000 | 2,400,000 | 4,800,000 | 4,800,000 | 4,800,000 |
| 33 | Start 4 Neoplastin Cl plus, (Stago) 6x 5 ml, | 33691159/120/4/4 | 1,000,000 | 1,000,000 | 1,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 |
| 34 | Start 4 Unicalibrator (Stago) 6x1ml | 33691162/45/4/4 | 261,500 | 261,500 | 261,500 | 523,000 | 523,000 | 523,000 |
| 35 | Start 4 Coag Control N+P (Stago) 12X2X1 ml | 33691162/46/4/4 | 507,500 | 507,500 | 507,500 | 1,015,000 | 1,015,000 | 1,015,000 |
| 36 | Start 4 150 strips of 4 disposable cuvettes (Stago) 150 X 4 | 33141211/47/4/4 | 2,812,500 | 2,812,500 | 2,812,500 | 5,625,000 | 5,625,000 | 5,625,000 |
| 37 | Start 4 balls vial of (Stago) 1850 | 33141211/48/4/4 | 1,300,000 | 1,300,000 | 1,300,000 | 2,600,000 | 2,600,000 | 2,600,000 |
| 38 | Start 4 FINNTIP 1.25ML (X100) | 33141211/49/4/4 | 2,040,000 | 2,040,000 | 2,040,000 | 4,080,000 | 4,080,000 | 4,080,000 |
| 39 | Start 4 FINNTIP 2. 5ML (X100) | 33141211/50/4/4 | 1,030,000 | 1,030,000 | 1,030,000 | 2,060,000 | 2,060,000 | 2,060,000 |
| 40 | Սպիչի թուղթ Start 4 –ի համար հատ | 33141211/51/4/5 | 41,800 | 41,800 | 41,800 | 82,500 | 82,500 | 82,500 |
| 41 | Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեստ | 33691159/121/4/4 | 100,700 | 100,700 | 100,700 | 100,700 | 100,700 | 100,700 |
| 42 | ԱԿՏԳ 100 թեստ | 33691159/122/4/4 | 164,300 | 164,300 | 164,300 | 328,600 | 328,600 | 328,600 |
| 43 | Պրոլակտին 100 թեստ | 33691159/123/4/4 | 245,200 | 245,200 | 245,200 | 429,100 | 429,100 | 429,100 |
| 44 | Պրոգեստերոն 100 թեստ | 33691159/124/4/4 | 61,300 | 61,300 | 61,300 | 122,600 | 122,600 | 122,600 |
| 45 | Լյուտեինիզացնող հորմոն 100 թեստ | 33691159/125/4/4 | 96,800 | 96,800 | 96,800 | 193,600 | 193,600 | 193,600 |
| 46 | Ֆոլիկուլոստիմուլյացնող հորմոն 100 թեստ | 33691159/126/4/4 | 96,800 | 96,800 | 96,800 | 193,600 | 193,600 | 193,600 |
| 47 | Ռեակտիվ DHEA-S 100 թեստ | 33691159/127/4/4 | 146,200 | 146,200 | 146,200 | 219,300 | 219,300 | 219,300 |
| 48 | Տեստոստերոն 100 թեստ | 33691159/128/4/4 | 136,800 | 136,800 | 136,800 | 205,200 | 205,200 | 205,200 |
| 49 | Էստրադիոլ 100 թեստ | 33691159/129/4/4 | 114,000 | 114,000 | 114,000 | 171,000 | 171,000 | 171,000 |
| 50 | Կորտիզոլ 100 թեստ | 33691159/130/4/4 | 219,300 | 219,300 | 219,300 | 365,500 | 365,500 | 365,500 |
| 51 | Տրիյոդթիրոնին T3 200 թեստ | 33691159/131/4/4 | 104,400 | 104,400 | 104,400 | 208,800 | 208,800 | 208,800 |
| 52 | Տրիյոդթիրոնին FT3 200 թեստ | 33691159/132/4/4 | 145,200 | 145,200 | 145,200 | 290,400 | 290,400 | 290,400 |
| 53 | Թիրոքսին T4 200թեստ | 33691159/133/4/4 | 104,400 | 104,400 | 104,400 | 208,800 | 208,800 | 208,800 |
| 54 | Թիրոքսին FT4 ազատ 200 թեստ | 33691159/134/4/4 | 193,600 | 193,600 | 193,600 | 387,200 | 387,200 | 387,200 |
| 55 | Թիրեոտրոպ հորմոն TSH 200 թեստ | 33691159/135/4/4 | 484,000 | 484,000 | 484,000 | 968,000 | 968,000 | 968,000 |
| 56 | Anti-Թիրեոգլոբուլին 100 թեստ | 33691159/136/4/4 | 684,000 | 684,000 | 684,000 | 1,282,500 | 1,282,500 | 1,282,500 |
| 57 | Anti-TPO ռեակտիվ 100 թեստ | 33691159/137/4/4 | 684,000 | 684,000 | 684,000 | 1,282,500 | 1,282,500 | 1,282,500 |
| 58 | C-Պեպտիդ 100 թեստ | 33691159/138/4/4 | 233,600 | 233,600 | 233,600 | 467,200 | 467,200 | 467,200 |
| 59 | Ինսուլին 100 թեստ | 33691159/139/4/4 | 155,800 | 155,800 | 155,800 | 311,600 | 311,600 | 311,600 |
| 60 | Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA | 33691159/140/4/4 | 338,000 | 338,000 | 338,000 | 676,000 | 676,000 | 676,000 |
| 61 | Բետա խորիոն գոնադոտրոպին | 33691159/141/4/4 | 129,200 | 129,200 | 129,200 | 193,800 | 193,800 | 193,800 |
| 62 | Ալֆա ֆետոպրոտեին 100 թեստ | 33691159/142/4/4 | 169,000 | 169,000 | 169,000 | 253,500 | 253,500 | 253,500 |
| 63 | Հերպեսվիրուս 1 HSV 1 IgG 100 թեստ | 33691159/143/4/4 | 274,400 | 274,400 | 274,400 | 411,600 | 411,600 | 411,600 |
| 64 | Հերպեսվիրուս 2 HSV 2 IgG 100 թեստ | 33691159/144/4/4 | 274,400 | 274,400 | 274,400 | 411,600 | 411,600 | 411,600 |
| ~~65~~ | ~~Պարա թիրոիդ հորմոն PTH 100 թեստ~~ | ~~33691159/145/4/4~~ | ~~120,600~~ | ~~120,600~~ | ~~120,600~~ | ~~241,200~~ | ~~241,200~~ | ~~241,200~~ |
| 66 | Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA 100 թեստ | 33691159/146/4/4 | 74,100 | 74,100 | 74,100 | 148,200 | 148,200 | 148,200 |
| 67 | CA 125 100 թեստ | 33691159/147/4/4 | 228,000 | 228,000 | 228,000 | 342,000 | 342,000 | 342,000 |
| 68 | CA 15-3 100 թեստ | 33691159/148/4/4 | 114,000 | 114,000 | 114,000 | 228,000 | 228,000 | 228,000 |
| 69 | CA 19-9 100 թեստ | 33691159/149/4/4 | 114,000 | 114,000 | 114,000 | 228,000 | 228,000 | 228,000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 70 | CA 72-4 100 թեստ | 33691159/150/4/4 | 81,700 | 81,700 | 81,700 | 81,700 | 81,700 | 81,700 |
| 71 | Ֆերիտին 100 թեստ | 33691159/151/4/4 | 75,900 | 75,900 | 75,900 | 151,800 | 151,800 | 151,800 |
| 72 | Վիտամին B12 100 թեստ | 33691159/152/4/4 | 176,600 | 176,600 | 176,600 | 264,900 | 264,900 | 264,900 |
| 73 | Anti-CCP Անտի ցիկլիկ ցիտրուլինային պեպտիդ 100 թեստ | 33691159/153/4/4 | 570,000 | 570,000 | 570,000 | 855,000 | 855,000 | 855,000 |
| 74 | ՄԻԱՀ-ի ռեակտիվ HIV COMBI PT 100 թեստ | 33691159/154/4/4 | 1,039,230 | 1,039,230 | 1,039,230 | 2,078,460 | 2,078,460 | 2,078,460 |
| 75 | Հեպատիտ C Anti-HCV | 33691159/155/4/4 | 1,700,500 | 1,700,500 | 1,700,500 | 3,401,000 | 3,401,000 | 3,401,000 |
| 76 | Հեպատիտ B HBsAg 100 թեստ | 33691159/156/4/4 | 570,000 | 570,000 | 570,000 | 1,140,000 | 1,140,000 | 1,140,000 |
| 77 | Հեպատիտ B HBeAg 100 թեստ | 33691159/157/4/4 | 118,750 | 118,750 | 118,750 | 118,750 | 118,750 | 118,750 |
| 78 | Հեպատիտ B Anti-HBc 100 թեստ | 33691159/158/4/4 | 608,000 | 608,000 | 608,000 | 1,140,000 | 1,140,000 | 1,140,000 |
| 79 | ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեստ | 33691159/159/4/4 | 164,700 | 164,700 | 164,700 | 164,700 | 164,700 | 164,700 |
| 80 | Տոքսոպլազմա IgM 100թեստ | 33691159/160/4/4 | 80,700 | 80,700 | 80,700 | 80,700 | 80,700 | 80,700 |
| 81 | Տոքսոպլազմա IgG 100թեստ | 33691159/161/4/4 | 80,700 | 80,700 | 80,700 | 161,400 | 161,400 | 161,400 |
| 82 | Ցիտոմեգալովիրուս IgM 100թեստ | 33691159/162/4/4 | 100,000 | 100,000 | 100,000 | 100,000 | 100,000 | 100,000 |
| 83 | Ցիտոմեգալովիրուս IgG 100թեստ | 33691159/163/4/4 | 117,890 | 117,890 | 117,890 | 235,780 | 235,780 | 235,780 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N

N ՇՀԱՊՁԲ-9/9-3 պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ________________ | հհ ________________ |
| ________________ | ________________ |
| հվհհ ________________ | հվհհ ________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը՝ ըստ գնման ժամանակացույցի |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ________________ | ________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________ | ________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 4
**N ՇՀԱՊՁԲ-9/9-3 պայմանագրի**

## ԱԿՏ N

### պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ---------------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
-----------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ------ ----
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| **Ապրանքի** | | **Չափի միավորը** |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |